ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Սյունիքի մարզի գ. Գորայքի և գ. Սառնակունքի կրթահամալիրների կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի փետրվարի 22-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 գնման պայմանագրում 2024 թվականի մարտի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 28.12.2023թ N2323-Ն և 26.10.2023թ. N 1869-Ն որոշումներ:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

22.02.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 գնման պայմանագրի

ք. Երևան «29» 03 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Կ. Մինասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.10.2023թ. N 1869-Ն և 28.12.2023թ. N 2323-Ն որոշումները և **ՀՀ Սյունիքի մարզի գ. Գորայքի և գ. Սառնակունքի կրթահամալիրների կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 22.02.2024թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N3-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Հիմք ընդունելով Կապալառուի առաջարկությունը՝ հաստատել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև 12 ամսում Կապալառուի կողմից կատարելիք աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ՝ 580 000 000 (հինգ հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամ, ընդ որում՝

-ՀՀ Սյունիքի մարզի գ. Գորայքի կրթահամալիրի կառուցման աշխատանքներ- 290 000 000 (երկու հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ,

-ՀՀ Սյունիքի մարզի գ. Սառնակունքի կրթահամալիրի կառուցման աշխատանքներ - 290 000 000 (երկու հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ:

1.1.3 Սահմանել, որ Համաձայնագրի շրջանակներում

1) Աշխատանքների կատարման ծավալները նախատեսվում են 12 ամսում կատարելու հաշվարկով՝ պայմանով, որ պակաս ֆինանսական միջոցների բյուջետավորումը և վճարումները կատարվում են 12 ամիսը լրանալուն հաջորդող մինչև 90 օրվա ընթացքում:

2) Պատվիրատուն՝ վճարման ժամանակացույցով սահմանված ամիսներին, Կապալառուի բանկային հաշվին փոխանցում է մինչև 117 782 000 ՀՀ դրամի չափով կանխավճար՝ համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է ստորագրված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Համաձայնագրով 12 ամսում կատարվելիք աշխատանքների ընդհանուր գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝

ԱԳ=ԿԾ*ՊՏ՝

ԱԳ– ավելացվող գումար,

ԿԾ– պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%–ը,

ՊՏ– պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են երկուական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. տ. 7
կառավարական տուն 3	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2500010890940100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08914368
Հ/Հ 900011049054, 900011049062	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Գ. Մինասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
22.02.2024թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 գնման պայմանագրի
«29» 03 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

«Հավելված N 3
22.02.2024թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 գնման պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45221142 /639	ՀՀ Սյունիքի մարզի գ. Գորայքի կրթահամալիրի կառուցման աշխատանքներ	-	-	-	63 097 500	63 097 500	63 097 500	126 195 000	126 195 000	126 195 000	210 325 000	210 325 000	210 325 000	210 325 000
	45221142 /640	ՀՀ Սյունիքի մարզի գ. Սառնակունքի կրթահամալիրի կառուցման աշխատանքներ	-	-	-	63 097 500	63 097 500	63 097 500	126 195 000	126 195 000	126 195 000	210 325 000	210 325 000	210 325 000	210 325 000

	Ընդամենը	-	-	-	126 195 000	126 195 000	126 195 000	252 390 000	252 390 000	252 390 000	420 650 000	420 650 000	420 650 000	420 650 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: »:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ900011049054, 900011049062
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. տ. 7
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2500010890940100
ՀՎՀՀ 08914368
Տնօրեն՝

_____ Կ. Մինասյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 4.2
«ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41» ծածկագրով
հրատապ բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

«27» մարտի 2024 թ.

ք. Երևան

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն , Ի դեմս Ընկերության տնօրեն Կառլեն Մինասյանի /նույն. քարտ 005910534 , տրված՝ 17.01.2017թ. 001-ի կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. 7
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2500010890940100
ՀՎՀՀ 08914368

Տնօրեն Կ. Մինասյան

Կ.Տ

27/03/2024

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 2500010890940100	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08914368	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900008000664	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 288 407 650 /երկու հարյուր ութսունութ միլիոն չորս հարյուր յոթ հազար վեց հարյուր հիսուն/	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված N 5.1
«ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41» ծածկագրով
հրատապ բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «27» մարտի 2024 թ.

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն, Ի դեմս Ընկերության տնօրեն Կառլեն Մինասյանի /նույն. քարտ 005910534, տրված՝ 17.01.2017թ. 001-ի կողմից/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող

պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. 7
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2500010890940100
ՀՎՀՀ 08914368

Տնօրեն՝ Կ. Մինասյան

Կ.Տ

27/03/2024

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն)՝ «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 2500010890940100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08914368

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 144 203 850 /մեկ հարյուր քառասունչորս միլիոն երկու հարյուր երեք հազար ութ հարյուր հիսուն/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝
ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները՝
/_____/	/_____/
/_____/	/_____/
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

«27» 03 2024 թ. N 1576/015

ԵՐԱՇԽԻՔ N 24-0261
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 117,171,718.00 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն մեկ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր տասնութ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը, սակայն ոչ ուշ քան 30/09/2025թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն — Գևորգ Մաչանյան

Գլխավոր հաշվապահ — Մեդրակ Բաղդասարյան

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955

info@armswissbank.am
www.armswissbank.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591

«27» 03 2024 թ. N 1577/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 24-0262
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 58,585,859.00 (հիսունութ միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր հիսունինը) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրիցնիպալի միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետը օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը, սակայն ոչ ուշ քան 30/09/2027 ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն — Գևորգ Մաչանյան

Գլխավոր հաշվապահ — Մեղրակ Բաղդասարյան

ՓԲԸ "ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ" ARMSWISSBANK JSC ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

«27» 03 2024 թ. N 1582/015

ԵՐԱՇԽԻՔ N 24-0267
(կանխավճարի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագրով նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում պայմանագրով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 117,782,000.00 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետը օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 15/10/2025թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ tender1@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/41 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն — Գևորգ Մաչանյան

Գլխավոր հաշվապահ — Մեդրակ Բաղդասարյան

"ARMSWISSBANK" CJSC ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ CUSTOMER SERVICE 02574955 "ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ" ՓԲԸ

info@armswissbank.am
www.armswissbank.am

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 10
Հեռ.՝ +374 60 757 000, +374 11 757 000
Ֆաքս՝ +374 10 529591